

Ոչ մէկ փարատոքսեալ նրբախուզուծիւն, որուն ճամբով երբեմն խորհողներ կեանքի պատկերներու կը հասնին: Բայց զայն լիովին զգալու համար անհրաժեշտ է հասուն-նալ, գեղացին կ'ըսէ՝ գաւակ մը թաղած ըլլալ: Այդ է պատ-ճառը, որ տհաս ժողովուրդը անկէ միայն իր կրցածը, ու-զածը հասկնայ: Այդ է պատճառը, որ թուրքը զայն վե-րածէ իրական Օրցիւր...: Մեռած էր հայրն ալ Մաթիկին, ձգելով իր տղաքը, իմ հօրս պէս, անոր մամային, սեւերով կնիկ, իմս վար երեսունէն, անորն ալ հաւանաբար մօտի-կը այդ թիւին:

Ու թող մեծնան, անոնք, այդքան կանուխէն հաղորդ ըլլալով մահուան հաւասար ալիւրի ցաւին: Ողբերգու-ծիւն էր փոխ-հացը, զոր մեր քաղքենին շատ չի հասկնար: Այլ' ըրր փախած հեքիաթներուն աշխարհը, որ պէսզի մեզ ըլլար կարելի հանդիպիլ անոր: Ու մուծին ելլելուն՝ ես ափ կ'առնէի մեր թաղէն անդին - որուն բոլոր տուները վճարուած - ուրիշներու դուռ ու փոխ կ'ուզէի, ամէն մարդ գիտէր, թէ ինչ կ'ուզեն առանց հօր տղաքը, մուծր կոխելուն...: Որբուծիւնը՝ հաւասարուծիւն, որուն մէկ եզրը մինակ է կեցած այդ դժբախտ մաման: Որ պէտք չէ մեռնի, մահը խաբելով տղոցը սիրոյն: Ատ է պատճառը, որ այրիները կատարեն չորս կնիկի գործ, յոգնիլ չգիտնան ու շահին, պարտկեն ճակատագրին հարուածէն ջախջախուած պատիկները: Հիւա՞նդ: Ան պէտք չէ ըլլայ: Պառկա՞ծ: Ան գործի վրայ, միշտ օտարի տուն, իրիկունը բերելու իր տղոց աման մը ուտեստ...: Այդ մաման է, որ պիտի քարերէն ճարէ հացը ֆելիքուն, փաղաքուշ վե-րազիր, որով կը մեծարուէինք մենք, հացը բզկտելու, աղալու եւ վայրկենապէս անհետ ընելու մեր մագիստրո-սուծեան մէջ: Վէպ մը առանձին, անհունապէս սրտա-ուռչ իմ երկրորդ մանկուծիւնը, ուր աշխարհին բոլոր զրկանքները մամայիս բազուկներուն աղեղովը կը վանուէին ինձմէ: Վէպ մը առանձին այդ անպատմելի ստուգուծիւնը, որ չորս-հինգ ֆելի բերաններուն համար